

SUMMER EXPO
12 MAY - 25 MAY 2003 / 4-10PM

Beirut
LEISURE



Beirut
Expo

AIN EL MREISSEH
TEL.: 01- 36 10 40

ԱԶՏԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՅՏՈՒՆԵՐԻ ԳԵՂՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE *أزتك جريدة يومية سياسية وأدبية - النيرة السؤولة، إيشا آدرويشيان*

1500 Լ.Ո. 76րդ ՏԱՐԻ, ԹԻԻ 43 (21386) ԵՐԵՎԱՆԻ, 29 ԱՊՐԻԼ 2003 10 ԷՁ

ԱՅՍՕՐ ԵՐԵՒԱՆ ԿԸ ՀԱՄՆԻ ՔԱՄԱԼ ԽԱՐԱԶԻ

Պաշտօնական միջոցառումները համար կը սպասուի, որ այսօր Հայաստանի հասնի Իրանի արտաքին գործոց նախարար Քամալ Խարազի: Խարազիի գլխավորած պատուիրակությունը վաղը հանդիպումներ պիտի ունենայ Հայաստանի նախագահին, վարչապետին, արտաքին գործոց և պաշտպանության նախարարներուն հետ:

ՄԻՆՉ ՀԱՉԱՐԱՒՈՐ ՇԻՒՆԵՐ ԲՈՂՈՔԻ ՅՈՅՅԵՐՈՒ ԿԸ ՄՄՈՆԱԿՅԵՐԻ

ՊԱՂՏԱՏԻ ՄԷՋ ԳՈՒՄԱՐՈՒՈՂ ԽՈՐՐԴԱԺՈՂՈՎԻ ՄԸ ԸՆԹԱՅՔԻՆ ՈՒԱՇԻՆԿԹԸՆ ԻՐԱՔԻ ԽՈՍՏԱՑԱԿ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐ ԱՊԱԳԱՅ ՄԸ

Միացեալ Նահանգներ ժողովրդավար ապագայ մը խոստացան Իրաքի՝ Պաղատաի մէջ գումարուող խորհրդաժողովի մը ընթացքին, որուն կը մասնակցին Իրաքեան ընդդիմադիր եւ քաղաքական այլ շարժումներու հարիւրաւոր ներկայացուցիչներ: Խորհրդաժողովին նպատակն է նախապատրաստական քայլեր որդեգրել կազմելու համար Իրաքեան կառավարութիւնը:



Իրաքցիք Պաղատաի կեդրոնը հաւաքաբար կ'աղօթեն՝ ամերիկեան բանակի խիստ հսկողութեան ներքեւ...

որուն ապագան: Խորհրդաժողովին մասնակցող բոլոր պատուիրակները անձնական հրահանգներ ստացած էին Միացեալ Նահանգներէն: Պատուիրակներուն կարգին են սիւննի եւ շիի կրօնապետներ, ընդդիմադիր ղեկավարներ, քիւրտ ղեկավարներ, ցեղախումբերու պետեր եւ գործարարներ: Մեծ էր թիւը աքսորէն վերադարձողներուն: Զգալի էր բացառապէս ղեկավարներու եւ գործարարներու թիւը: Մասուն Պարզանիի եւ ժալալ Թալապանիի:

Կարնրը խօսեցաւ վերաշինութեան գործընթացին մասին, թուելով կարգ մը իրազօրծումները: Սակայն ան չեւտեց, որ վերաշինութեան աշխատանքը յաջող սկսելու եւ ընթանալու համար անհրաժեշտ է ապահովութիւնը: Կարնրը խոստովանեցաւ որ բաւական չէ գործարարները: Մեծ էր հաստատումը Իրաքի տարածքին, բայց առանց սահմանափակումներու: Աքսորէն վերադարձած Սաատուն Տուլայմի ըսաւ, որ ապահովութեան բացա-

կալութիւնը կը սպառնայ Իրաքի նորածին ժողովրդավարութեան: Իրաքի ապագայի պետական կառուցիչն շուրջ շատ են տարակարծութիւնները, գորս պիտի փորձեն լուծել ամերիկացիները: Իսլամական պետութիւն պահանջողներուն կողքին կան նաեւ ոչ կրօնական կառույց մը պահանջողները: Շիի ցեղաբարները Պաղատաի փողոցներուն մէջ «Այո՛, այո՛ իսլամութեան, ո՛չ, ո՛չ Ամերիկա» շարք՝ էջ 10

ՏՈՒՇԱՆՊԵՏ ՄԷՋ

ՆԱԽԱԳԱՀՆԵՐ ՓՈՒԹԻՆ ԵՒ ՔՈՉԱՐԵԱՆ ՏԵՍԱԿՅՈՒԹԻՒՆ ՄԸ ՈՒՆԵՅԱՆ ՀԱՊԻ ՎԵՀԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐՈՒՆ ԶՈՒԳԱՀԵՈ

Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան և Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին Կիրակի օր Տուշանպէի մէջ ունեցան հանդիպում մը: Նախագահները Տաճիկիստան կը գտնուէին մասնակցելու համար Հաւաքական Անվտանգութեան Պայմանագիրի Կազմակերպութեան և Եւրասիական Տնտեսական Միութեան նիստերուն:

Պաշտօնական տեղեկատուութեան համաձայն, Քոչարեան և Փութին քննարկած են այս տարուան սկիզբին նախագահ Քոչարեանի Մոսկուա այցելութեան ընթացքին ստորագրուած պայմանագիրներու կիրարկման ընթացքը: Անոնք յատկապէս քննարկած են Ռուսիոյ և Հայաստանի միջեւ առեւտրատնտեսական համագործակցութեան և կորիւպցիոն ուժանիւթի բնագաւառին վերաբերող հարցեր: Հանդիպման ընթացքին նախագահ Քոչարեան դիտել տուաւ, որ դիտորդի կարգավիճակով Հայաստանի մասնակցութիւնը՝ Եւրասիական Տնտեսական Միութեան, կը նպաստէ թէ՛ Ռուսիոյ և թէ՛ Միութեան միւս երկիրներուն հետ Հայաստանի առեւտրատնտեսական համագործակցութեան վարգացման:

Եւրասիական Տնտեսական Միութիւնը, որուն կ'անդամակցին Ռուսիա, Պիլիպինս, Ղազախստան, Խորվաթիստան, Տաճիկիստան, Տուշանպէի մէջ գումարեց իր նիստը, երկիրներու նախագահներուն մասնակցութեամբ: Նիստին մասնակցեցաւ նաեւ Հայաստան, դիտորդի կարգավիճակով: Քննարկուեցան մաքսային միացեալ տարածքի, թմրեցուցիչի մաքսանենգութեան դէմ միացեալ պայքարին վերաբերող խնդիրներ:

Միւս կողմէ, Տուշանպէի մերձակայ Փուկուս շրջանին մէջ երկ կայացաւ Հաւաքական Անվտանգութեան Պայմանագիրի (ՀԱՊ) կազմակերպութեան երկիրներու ղեկավարներու վեհաժողովը, որմէ ետք անդամ երկիրներու՝ Ռուսիոյ, Հայաստանի, Պիլիպինսիոյ, Ղազախստանի, Խորվաթիստանի և Տաճիկիստանի ղեկավարները յայտարարեցին շտապ հակադարձութեան ուժի պիւնտրական միացեալ հրամանատարութեան մը կազմութիւնը:

Վեհաժողովէն ետք մամլոյ ասուլիսի մը ընթացքին Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին յայտարարեց, թէ ՀԱՊի կազմակերպութեան հիմնական նպատակն է երաշխաւորել անդամ երկիրներու անվտանգութիւնը և տարածքային անբռնցիկութիւնը:

ՀԱՊը ստեղծուած էր 1992ին՝ ահաբեկչութեան, թմրեցուցիչի մաքսանենգութեան և կազմակերպութեան յանցագործութեան դէմ համագործակցութեան ընդլայնման համար:

Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նապարպալեւ ասուլիսին ընթացքին յայտնեց, որ ՀԱՊի կանոններուն համաձայն, անդամ որեւէ երկրի մը դէմ յարձակման պարագային, միւս երկիրները կրնան օժանդակութիւն տրամադրել, ներառեալ՝ պիւնտրական օժանդակութիւն:

Իր կարգին, Պիլիպինսիոյ նախագահ Ալեքսանտր Լուրաչէնքօ յայտնեց, որ կազմակերպութեան անդամ երկիրները պիտի ձեռնարկեն միացեալ պիւնտրական ուժի մը կազմութեան, յատկապէս Իրաքի պատերազմէն ետք ստեղծուած իրավիճակին լոյսին տակ: «Միջազգային կազմութիւնը մեզի կը մղէ այս քայլին դիմել: Մենք պէտք է երաշխաւորենք մեր երկիրներուն և ժողովուրդներուն անվտանգութիւնը: Նկատելի է, որ ՄԱԿի մէջ որոշ ուժեր կը փորձեն քանդել միջազգային համակարգը և անոր հիմնական առանցքը՝ Ապահովութեան Խորհուրդը», դիտել տուաւ Լուրաչէնքօ:

ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՎԱՐԶԱՊԵՏ ՄԱՀՄՈՒՏ ԱՊՊԱՍ ԿԸ ՍՊԱՌՆԱՅ ՄԵՐԺԵԼ ՊՈՒՇԻ ՀՐԱԻԷՐԸ, ԵԹԷ ԱՐԱՑԱԹԻ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԵԱՆ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ԶՏՐՈՒԻ

Պաղեստինեան իշխանութեան նշանակեալ վարչապետ Մահմուտ Ապպաս սպառնացած է մերժել Միացեալ Նահանգներու նախագահ Ըորձ Պուշի հրաւերը, եթէ Եսաէր Արաֆատի ճամբորդութեան ազատութիւն չտրուի:

Ապպասի անակնկալ գորակցութիւնը պաղեստինեան իշխանութեան նախագահին, որ կ'անտեսուի Ռաշիմկընի և Իսրայէլի կողմէ, տեղի կ'ունենար կառավարութեան կազմի յայտարարութեան նախօրեակին: Ապպաս կառավարութիւնը խորհրդարանին պիտի ներկայացնէ այսօր: Պաղեստինցի պաշտօնատարներ ըսին, որ այս յայտարարութեամբ Ապպաս Մազէն Ռաշիմկընի կը հասկցնէ, թէ Պուշի հրաւերին պիտի չկարենայ ընդառաջել եթէ Արաֆատի արտօնութիւն չտրուի ազատօրէն ճամբորդելու ու վերադառնալու: Անցնող 16 ամիսներուն Արաֆատ «բանտարկուած» է Ռամալլայի մէջ: Իսրայէլ կ'ըսէ, որ Արաֆատ ազատ է դուրս ելելու պաղեստինեան շրջաններէն, սակայն պաղեստինցիներ կը վստահան, որ վերադարձի իրաւունք չտրուի պաղեստինցի նախագահին:

Իսրայէլ եւ միջազգային ընտանիքը կը յուսան, որ Կապալայի անկախութեան ճանաչումը Ապպաս պիտի կարենայ կազմել բարեկարգական կառավարութիւն մը, որ արմատական բարեկարգումներու պիտի ենթարկէ ութամեայ իշխանութիւնը, որ կ'ամբաստանուի փտածութեամբ, կաշառակերութեամբ եւ ծայրայեղական շարժումներու հետ ունեցած կապերով:

Ապպաս եւրոպացի դիւանագետներու հետ ունեցած հանդիպումի մը ընթացքին խոստացաւ, որ պիտի ճնշէ ծայրայեղական շարժումները եւ թէ իբրեւ վարչապետ իր առաջին ճամբի մէջ պիտի յայտարարէ աւարտող զինեալ պայքարին: Յիշեալ տեղեկութիւնը հրապարակուած էր «Հաւաքածո» օրաթերթին կողմէ: Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոն իր կարգին կ'ակնկալէ, որ Ապպաս պայքարի պաղեստինեան «ահաբեկչութեան» դէմ: Ան անցնող, որ պաղեստինեան ապահովութեան ուժերը պէտք է հալածեն ու սանձեն իսլամական ծայրայեղական խմբակները:

Համասի ղեկավարները՝ Ապտէլազիզ Ռանթիպի գգու-



Արաֆատ և Ապպաս

շացուցած էր պաղեստինեան նոր կառավարութիւնը ծայրայեղականներու դէմ պատերազմ հռչակելէ: Միւս կողմէ, Արաֆատ եւ անոր ղեկավարած Ֆաթի շարժումը խորհրդարանին մէջ գորակից պիտի կանգնին Ապպասի կառավարութեան: Կը նախատեսուի, որ արմատական շարժումներ քուն չտան նոր կառավարութեան:

Շարք՝ էջ 10

ՄԱՐԴԿԱՅԻՆ «ԾԻՆՈՄ»Ը Ի ՎԵՐՉՈՅ ԱՄԲՈՂՉԱՅԱԾ ԷՁ 7

ԻՆԹԵՐՓՈԼԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարեան երեկ ընդունեց Ինթերփոլի ընդհանուր բարտուղար Ռոնալտ Քեյնէք Նոպլը: Յանցագործութեան դէմ միջազգային պայքարին մէջ կարեւորելով Ինթերփոլի դերը, վարչապետ Մարգարեան յոյս յայտնեց, որ Նոպլի այցելութիւնը կը նպաստէ այլ կազմակերպութեան հետ Հայաստանի համագործակցութեան գարգացման:

Նոպլ գնահատեց Հայաստանի իրաւապահ մարմիններու, ոստիկանութեան եւ անոր ենթաբաժիններուն գործունէութիւնը: Ան հարգեց, որ Նոպլի այցելութեան կողմէ Հայաստանի պիտի տրամադրուի 100 հազար տոլար, որ ամբողջովին պիտի յատկացուի Հայաստանի ոստիկանութեան: Նոպլի համաձայն, այս ծրագրին յաջողութեան հետ Հայաստանի պիտի դառնայ Ինթերփոլի 151 անդամ երկիրներուն մէջ բարձրակարգ արդիական սարքաւորում ունեցող 50րդ երկիրը:

Վարչապետ Մարգարեան իր կարգին նշեց, որ Հայաստանի ոստիկանութիւնը անհրաժեշտութեան, թմրեցուցիչի մաքսանենգութեան, բնակչութեան ապօրինի գաղթի դէմ պայքարի եւ այլ մարզերու մէջ

ԼՈՅՍ ՏԵՍԱԿ

24 ԱՊՐԻԼ 2003 ՔԱՅԱՌԿ

«ԱԶԴԱԿ»Ի ԱՊՐԻԼ 24Ի ՔԱՅԱՌԿԸ

Ստանալ «Ազգակ»ի ցրուիչները և գրախանութները:

Սակ՝ 5000 Լ.Ո.

... ԵՆՈՅՆԻՍԿ ՄԵԿ ՄՈՍՈՎ...

ԱՊՐԻԼԵԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄՆԵՐԷՆ ԵՏՔ

1915-1923 Օսմանեան կայսրութեան, թուրք պետութեան սարքած Նոբուհէն վերապրողները պատմեցին իրենց ապրած ողիսականը, արհաւիրքը, փոխանցեցին հայրենագուրդ, գաղթական, տարագիր ու պանդուխտ ըլլալու ցաւը:

38րդ տարելիցը ոգեկոչեցինք անգամ մը եւս: Յեղասպանութեան գոհ սերունդին թոռներն ու ծոռերը ամենայն գիտակցութեամբ կատարեցին իրենց խղճին պարտքը: Սա պայծառ ցուցանիչ մըն է արդէն, թէ թուրքին սարքած սպանողը չէ մոռցուած, եւ պահանջատէր սերունդ մը կը հետապնդէ Հայ Դատը, որ անժամանցելի է:

Մամուլով արտայայտուած յօդուածներ, ձայնասփիւռային կլոր սեղաններ, դասախօսութիւններ, հսկումի երեկոներ, միասնականութեան գիտակցութիւնը արտայայտող հրատարակչային ոգեկոչումներ, Ս. պատարագ մեր վանքերուն, տաճարներուն եւ եկեղեցիներուն մէջ, հոգեհանգստեան արարողութիւններով, որոնց ընթացքին անգամ մը եւս յիշուցաւ ցեղասպանին ոճիրը՝ նահատակներուն յիշատակումով:

Յիշեալ բոլոր նախաձեռնութիւնները ունեցան իրենց բազմաթիւ կամ տեղ-տեղ նուազ թիւով ներկայութիւն: Չենք ուզեր «հանդիսական» բառը գործածել, որովհետեւ ընթացիկ իմաստի հանդիսութիւններ չեն կամ չեղան ոգեկոչման յիշատակումները, նահատակներուն անմեղութիւնը շեշտող հրատարակչային բոլոր ձեռնարկները:

Ընդհանրապէս երիտասարդութիւնն էր կանգնած մեր դիմաց, ու ժողովուրդ-զանգուածը ուրախութեամբ հաստատեց, թէ մեր երիտասարդութիւնը անտարբեր չէ հայկական պահանջատիրութեան նկատմամբ: Փաստն այն է, որ ան արտայայտեց իր կամքը, վերանորոգեց իր ուխտը՝ տէր կանգնելու Հայ Դատին, մինչեւ որ ցեղասպանը ընդունի իր մեծ յանցանքը, իր ոճիրը:

Փոքրամասնութիւն մըն էր արդեօք մեր երիտասարդութեան շարքերը ներկայացնող սերունդը: Մեծամասնութիւն մը պահուած էր արդեօք իր պատեանին մէջ՝ գոհ իր «փափուկ» կեանքով, անտարբեր՝ անցեալով, եւ ոչ մասնակից մեր լինելութեան երթին:

Պահ մը նկատենք կամ ենթադրենք, թէ պահանջատէրները քիչ են, եւ անտարբերները՝ շատ, բազմաթիւ: Հոս յիշենք կրկնութեան գնով Պարոյր Սեւակի պատգամը. «Քիչ ենք, բայց հայ ենք»: Միւս ինքնամոռաց դասին համար կարելի չէ ըսել «չատ ենք, որովհետեւ հայ ենք»: Այս վերջինները պէտք է լաւ իմանան, թէ իրենք պիտի պարտուին ինքնաբերական տղամուտին մէջ, իսկ նորագարթ յանձնառուները իրաւունք պիտի ունենան բարձրաձայն յայտարարելու, թէ հաւատարիմ կը մնան հարազատ ժողովուրդի պատմութեան, անոր կանչին ու կոչին, ձայնին ու երթին, որքան ալ փշոտ ըլլայ ճամբան:

Երկրորդ մատնանշումը այն պիտի ըլլար, թէ կազմակերպիչ յանձնառուները չէին կրնար նոյն ատեն անէն տեղ ըլլալ: Անշուշտ ուրախ պիտի ըլլայինք, եթէ բոլոր սրահներն ու եկեղեցիները յորդէին բազմութեամբ: Այս պարագային խաչածեռում՝ եզրը ընդունելի չի կրնար ըլլալ, որովհետեւ հաւատացեալները եթէ նոյնիսկ ցանցառ ներկայութիւն եղան կար մը եկեղեցիներու մէջ, ատիկա ապահովել պէտք է ըլլայ, քանի որ նոյն օրը բազմաթիւ ձեռնարկներ, աշխարհական թէ կրօնական իմաստով, սփռուած էին գաղութին մէջ, մայրաքաղաքէն մինչեւ հեռաւոր արտարձանային թաւաքներ, երկրին միւս քաղաքներուն մէջ եւս: Կարելի էր եւ տպուկորիչը հայկական շուկաներուն, վաճառատներուն, վարժարաններուն, գործատեղիներուն, խմբագրատներուն փակ մնան էր, որուն ի տես՝ մեր դրացիները ապշած հարցուցին.

- Ի՞նչ պատահած է այսօր հայերուն...
88 տարի ետք նոյն հարցումը, նոյն պատասխանը.
- Որովհետեւ աշխարհի վրայ գոյութիւն ունի թուրք կոչուած ազգ մը, որ մինչեւ օրս կը խանդաբէ մարդկութեան խաղաղ կեանքը, մասնաւորաբար հայ ազգին կեանքը:

Ապրիլ 24ի օրը եւ նախօրեակի Հսկումին, լիբանանահայ գաղութի բազմիկները ներկայ եղան քիչ մը ամէն տեղ, հոս խուռն գաղմութեամբ, հոն՝ գուցէ մէկ մոմով, բայց ոգեկան արթնութեամբ: Տարածուցեանք թաղէ թաղ, մտանք եկեղեցիներէ ու մատուռներէ ներս, խնկարկեցին Անթիլիասի մայրավանքի նահատակաց յուշակոթողին, Պիքֆայի յուշակոթանք պահ մը «աչքերը բացաւ» ու հաստատեց, թէ հայ երիտասարդներ կ'ապրին դեռ՝ յիշեցնելու համայն աշխարհին.
«Այսքան չարիք թէ մոռանան մեր որդիք, թող որը աշխարհ հային կարգայ նախատինք»:

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ Ա. ԵԿԵՂԵՑԻԻ ԿՐԹԱՆՊԱՏՈՒՄ ՀԱՆՐԱՆԱԿԻՉ ՅԱՆՉՆԱՍՈՒՄԲ 1850ԷՈՒ Ի ՎԵՐ ԳՈՐԳԱՎԱՃԱՆ ԸՆՄԱՌՈՒՄԷ ԳՐԻԳՈՐ ՆԱԼՊԱՆԵԱՆ ԿԳ ԱՆՐԱԿԱՅՈՒ ԸՄՈՒՄԷ ՀԱՅԿԱԿԱՆ - ԿՈՎԿԱՍՏԵԱՆ - ՊԱՐՍԿԱԿԱՆ ԳՈՐԳ - ԿԱՐՊԵՏԻ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ ՎԱՃԱՌՔ Կազմակերպուած ԸԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԶՈՒՆԵԻ ՏՕԱՍԵԱԳԻՆ ԱՌՈՒԿ Պաշտօնակազմ բացում՝ Ուրբաթ, 25 Ապրիլ 2003, երեկոյան ժամը 7:00ԻՍ Ցուցահանդէսը բաց է ամէն օր, մինչեւ Երեքշաբթի, 6 Մայիս 2003, երեկոյան ժամը 5:00ԷՈՒ 9:00: Հայ Աւետարանական Ա. Եկեղեցիի համդիսարարի մէջ: ՄՈՒՏԵՐ ԱԶՍ

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 88ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ ԸՆԿ. ՏԻԳՐԱՆ ԴԻՆՊԱՇԵԱՆԻ ԽՕՍՔԸ

Պէտք է երթանք մինչեւ 1965 թուականը, Եղեռնի յիսնամեակի տարին, տեսնելու համար Հայկական Յեղասպանութեան հրապարակազարկողական առաջին ոգեկոչումը: Խորքին մէջ, այս հարցին շուրջ գաղափարական միասնականութիւնը նախապէս ալ գոյութիւն ունէր. քաղաքական հոսանքներու եւ կուսակցութիւններու միջեւ աղմուկ տարակարծութիւններն էին արգելք կենսական ու բնական միասնականութեան հրապարակային արտայայտութեան:

Սուզի բարձրագոյ զբսեւորումին, ցաւի արտայայտութեան մէջ համաձայն էին բոլորը: Համաձայն էին նաեւ աղէտին դատապարտման, անոր հետեւանքներուն դարմանման, հայ ժողովուրդի անժամանցելի իրաւունքներուն վերատիրացման, հատուցման ու նոյնիսկ հողային պահանջին նկատմամբ: Եղեռնի պատճառներու մասին, մեկնաբանութիւնները, երբեմն մեղադրական, չէին հիմնուել լուրջ համոզումի վրայ, այլ տուրք կու տային կուսակցամտական չափազանցութիւններու:

Բուն տարակարծութիւնը այլ տեղ էր: Կապուած էր համայնավարութեան քաղաքական նպատակներուն նկատմամբ տարբեր դիրքորոշումներու: Խորհրդային Հայաստանը պէ՞տք էր վերջակէտ համարել Հայկական Հարցի փոթորկոտ ու արիւնալի պայքարին ու պէ՞տք էր համաձայնիլ համայնավարներուն հետ, ըստ որոնց Խորհրդային Հայաստանի կայացմամբ ընդմիջու լուծուած էր ազգային հարցը կովկասի մէջ: Բացի փոքրաթիւ համայնավարներէն, ամէն մարդ անկախական էր, գէթ ծրագրով: Ամէն մարդ պահանջատէր էր, ու Միացեալ Հայաստան կ'ուզէր: Հակասականը այն էր, որ տեսական միասնութեան այս խորատկերին յառաջանան, Հայաստանի անկախութեան գաղափարը կը տարուբերէր ժխտումէն բացարձակ արժէք դաւանող կեցուածքներու լայն երանգապնակի մը վրայ: Երանգապնակ, որ հայութեան երկփեղկուած շեշտող խզման խոր դիմորով ծածկուած էր:

Խորհրդային իշխանութիւններու վարած ազգային քաղաքականութեան հոլովութիւնը կարելի դարձուց սփիւռքահայութեան խզման գիծերու տեղափոխութեան, անոնց տակաւ աղօտացման, նոյնիսկ՝ չքացումին: Սակայն, երկփեղկումին տեղի չեւ հոգեբանական օտարումը յամեցաւ երկար, ազգային միասնակամութեան տեսական առկայութեան եւ անոր գործնական ու շօշափելի դրսեւորումներուն միջեւ պահուած խրատման մը, որ տակաւն այսօր լրիւ չէ լեցուած:

Հայաստանի անկախացումը տրամաբանօրէն վերջակէտ պէտք է դնէր այդ երկփեղկումին: Այդպէս ալ եղաւ: Հայկական Յեղասպանութեան միջազգային ճանաչման ու դատապարտման հարցը, հատուցումը կազանը, Հայաստանի պետականութեան կայացումը, ժողովուրդավարական կարգութեան ամրացումը, տնտեսութեան զարգացումը, ընկերային արդարութեան հաստատումը վիճարկելի չեն: Վիճելի չեն նաեւ դարարդեան տագնապի հայանպատակ լուծման պահանջը, Ջաւախքի հայութեան իրաւունքներու պաշտպանութիւնը, հայ ճարտարապետական եւ այլ արուեստի վկայարաններու պահպանման պահանջը: Օրակարգի այս կէտերը, իրենց ընդհանուր գիծերուն մէջ փոքր երանգներով, կը համախմբեն հայ քաղաքական մտածողութեան գլխաւոր բեւեռները:

Հայկական վերանորոգ պետականութիւնը պէտք է դիտուի իրբեւանօթը ազգին քաղաքական մտածողութեան գործնական կիրարկումին: Հայ Դատի պայքարին կիցակէտը Հայաստանն է, իր պետական կառուցներով: Հայութեան մղած պայքարը դժուարութեամբ կ'արդիւնաւորուէր, երբ չէինք կրնար օգտուիլ պետական կառուցներու նպաստէն: Ահա թէ ինչո՞ւ անդահատելի յառաջադրացք կը համարենք այն, որ տակաւնութեան տատանումն է ու նոյնիսկ ժխտումն է ետք, հայրենի պետականութիւնը իր արտաքին քաղաքականութեան օրակարգին վրայ ամրագրեց ցեղասպանութեան միջազգային ճանաչման ու դատապարտման հարցը: Հայ Դատը վերջապէս հայրենացաւ:

Անշուշտ կարելի է տարակարծիք ըլլալ հայրենի պետութեան վարած քաղաքականութեան նպատակայնութեան վերջին քայլը: Թուրքիոյ հետ յարաբերութիւններու հարց, դարաքաղեան խնդիր, պաշտպանութեան համակարգ եւ արտաքին քաղաքականութեան սահմանում, Հայ Դատին առնչուած հարցեր են, որոնք կրնան տարբեր հայեցակարգերով մեկնաբանուել ու կրնանք տարբեր եզրակացութիւններու յանդիլ: Այդ եզրակացութիւնները սակայն չեն կրնար պարտկել Հայաստանի պետութեան անժխտելի պարտաւորութիւնը՝ ըլլալու յառաջապահ հայ ժողովուրդի իրաւունքներու վերատիրացման պայքարի ճակատին վրայ: Քաղաքականութեան այլ ընտրանքներու շուրջ տարակարծութիւնը ժողովրդավարական գործընթաց է. ան չի վերաբերի սկզբունքներին ու էութեան:

Գործնական պէ՞տք էր կատարուէր սակայն: Արժէքաւոր ձեռքբերումները արդէն մեր ետեւն են: ՄԱԿի բեմէն Հայաստանի նախագահի հանդիսաւոր պահանջատիրական յայտարարութիւնն ու Ֆրանսական խորհրդարանի մէկ տողնոց բանաձեռնօրէնքը գործնական շարունակութիւն չունեցան: Փոխարէնը, ակնատես եղանք օտար ներշնչումով հաշտութեան յանձնարումներ մը կազմութեան, որ ցեղասպանութեան ճանաչման հարցը պատմական-ակադեմական հետազոտութեան ոլորտին սահմանելէ ետք, փորձեց հայ-թուրք յարաբերութիւններու ապաքաղաքական ենթահող մը տեղի տալ: Օտարածին ու դաւադիր այս նախաձեռնութեան նկատմամբ հայ քաղաքական մտածողութեան գրեթէ բոլոր բեւեռներուն հակազդեցութիւնը եղաւ մեթոդական ու բուռն: Փորձը ձախողեցաւ:

Վերջերս, երկրորդ, այս անգամ երրորդական միջավայրի մէջ փորձ մը վիժեցաւ իր ծնունդին ընթացքին:

Այս ու թրքական ու ազգայնական միացեալ խեղաթիւրումներուն դէմ ծառայողը Հայ Դատի գործունէութեան գլխաւոր ոլորտն է այժմ: Հոս ու հոն դասախօսութիւն մը, երբ առիթը ներկայանայ (ինչպէս «Արարատ» ժայռակէնի ցուցադրութիւնը) ժամանակաւոր աշխուժութիւն մը, կամ քարոզչական ընդմիջի ու ներքին սպառման սահմանում ձեռնարկներ չեն կրնար քաղաքական լուրջ նախաձեռնութեան դեր կատարել: Աւելցնենք նաեւ, որ այս օրերուն Միացեալ Նահանգներու ներկայացուցչական Տան մէջ Հայկական Յեղասպանութիւնը դատապարտող բանաձեռն մը քննարկման հերթական փորձը երկարամեայ յարատեւման մը փաստը կու տայ: Կայ նաեւ սպասումը, թէ նախագահ Պուշ Ինչպէս պիտի որակէ հայկական ողբերգութիւնը իրաքեան հարցին մէջ թուրքիոյ կեցուածքէն դժգոհութիւնը պիտի յանդի՞ հոն, որ Ամերիկայի նախագահը գործադրութեան դէմ Հայկական Յեղասպանութեան ճանաչումը արժարժեցու էր մը տարակուսելի սպառնալիքը:

Իրագործումներու շղթան, կը տեսնենք, որ կարճ է: Ցատակ ալ չէ, թէ ինչպէ՞ս կը սահմանենք Հայաստանի ու Սփիւռքի փոխադարձ պարտաւորութիւններու տարողութիւնը եւ ի՞նչպէս կը կենսագործենք մեր չափաբաժինը: Պիտի խոստովանենք, որ միջազգային բարդ կացութեան մէջ, սպառնալիքներու ու պատերազմի թոհոսումին տնտեսական յամեցող տագնապի միջնորդութիւն մէջ, հայութիւնը քաղաքականապէս տկար

դիրքերու վրայ կը յայտնուի: Պահանջատիրական պայքար մը եղու համար, պէտք է ուժի դիրքերէ խօսելու կարելիութիւն ունենալ, ուժական կուսակցութիւն կուլինի:

Իսկ մեր հիմնական կուսանք մեր ժողովուրդն է, անոր ոգեկոչութիւնը, միասնական կամքի արտայայտութիւնը: Ո՞ւր է մեր ուժը հիմա, ինչո՞ւ այնքան տարտղնուած է, որ Լիբանանի մէջ համայնքային հանրայայտ իրաւունքներու գոհացումն անգամ չենք յաջողիլ իրականացնել:

Հայ Դատի պահանջատիրութեան գլխաւոր գործօնը հանդիսացող իրանահայութեան ուժին ջլատումը եւս օտար ներշնչում ունի մեր թշնամիին հերթական յաղթանակն է պարզուած վիճակը:

Քաղաքական ասպարէզին մէջ մեր յամեցող կրաւորականութիւնը ծանրակշիռ հետեւանքներ կ'ունենայ մեր ազգային կեանքի մակարդակին: Պահանջատիրական օրակարգի պակասը, իրագործումներու բացակայութիւնը եւ յաղթանակներու ուշացումը կը յանգին ազգի կարողականութեան նկատմամբ հաւատքին տեղատուութեան: Ու հայ մարդը կը սկսի հարց տալ, թէ ինչի՞ կը ծառայեն հայ քաղաքական կազմակերպութիւնները, միութիւնները, թերթերը: Ինչի՞ կը ծառայեն հայկական դպրոցները: Ոգեկան սովի հետգհետէ ծանրացող միջնորդութիւն մէջ՝ հայ մարդը կ'օտարանայ իր հարազատ կառուցներէն, ու իր գաւակները կ'օտարացնէ հայ դպրոցներէն:

Ի՞նչ խօսք, որ ազգային հարցերու նկատմամբ անտարբերութեան ու ժխտումի այս հոսանքը մտնելը կը ստանայ նաեւ նորօրեայ համաշխարհայնացման երեւոյթնէն: Համաշխարհայնացումը տեղեկութիւններու ու գաղափարներու արագ ու անհակակշիռ տարածումը չէ միայն: Ատիկա պարզապէս միջոցն է: Ի խնդիր տնտեսական տարակուսելի արժանութեան, սահմաններ գանցող առեւտրուր, ճարտարաւեստի սանձակոտոր գարգացումը կը յանգի նոր տեսակի կայսերապաշտութեան մը. արդիւնքը մշակոյթներու համահարթեցումն է, ազգային առանձնայատկութիւններու ի սպառ ժխտումը:

Մենք եւս, ակամայ կը տարուենք նոյն հեղեղէն, ժամանակի պահանջներու անդարձելի ձգտողութեան ենթակա: Միջին սերունդի անտարբերութեամբ, ապագային ու ետակերտն վերաբերումով արտայայտուող այս յորձանքը կրնայ նորահաս սերունդներ աւելի արմատական օտարման ենթարկել, եթէ չզիտնանք առաջը առնել աւելին:

Նախ իւրաքանչիւր Ապրիլ 24ին ցուցադրուող միասնականութեան տալով մասնուն ընդմիջ ու ազգային - քաղաքական րովանդակութիւն: Այսինքն, նոյն նպատակին ուղղելով գիծերը եւ այդ նոյնութիւնը թափանցիկ ու տեսանելի ընծայելով: Չտարուելով ժամանակաւոր, խաբուսիկ շահերու գոհացման միտող սին խոստումներէ, ու հասկնալով, որ ազգային շահերու արդիւնաւոր հետապնդում կարելի է կատարել միայն այն դիրքերէն, որոնք սպահանջուած են ազգային ուժի միասնական դրսեւորման ճանապարհով:

Երբ առաջնորդուինք սկզբունքային ու ազգային գաղափարի վրայ հիմնուած միասնականութեամբ, մեր ժողովուրդը անպայաման զօրավիզ կը կանգնի մեզի, որովհետեւ մեր միութեան մէջ կը տեսնէ իր հաւաքական ուժին հարաբար արտայայտութիւնը: Անգնահատելի այս զգացումն է, որ կը զօրացնէ համայնքին մաս կազմելու կենարար ապրումը, հաւաքական իրձերք մակերես կը հանէ ու կամքերը կը ջրղեղէ:

Ձեւական միասնականութեան մը մասին չէ ուրեմն խօսքը: Այլ, հոգեբանական շղթաքարձի մասին, որ Հայաստանի անկախութեամբ տեղեղուած նոր կացութիւնը ազգային ապրումի պիտի վերածէ ու յառաջընթաց հոլովութի մը ազգայնաւ դառնայ:

Բնականաբար մեր ուշադրութեան կիցակէտը Հայաստանն է, որուն անկախ պետականութեան ամրացման, ժողովրդավարութեան խորացման, տնտեսութեան զարգացման, միջազգային վարկին մեծացման ի խնդիր պատրաստ պէտք է ըլլանք ամէն գոհողութեամբ: Այս արժէքներու ներառումն ու պաշտպանութիւնը չեն ենթադրեր Հայաստանի իշխանութիւններու վարած քաղաքականութեան կոյր հետեւողութիւնը: Ընդդիմութիւնն ու քննադատութիւնը, երբ շինչի փոխընտրանք կ'առաջարկեն, գաղափարապետօրէն հիմնաւորուած են ու լուրջ, տոյնքան, եւ թերեւս աւելի, արժէքաւոր կրնան ըլլալ քան համախոհութիւնն ու գործընկերութիւնը: Կարելորդ՝ ժողովրդավարական ըմբռնումին հաւատարմութիւնն է. չեմ բաժնեւ տեսակէտը, սակայն կը յարգեմ գայն: Կ'ընդունիմ նաեւ, որ մեծամասնութեան ձայնով որոշուած կը վերածուի ազգին քաղաքականութեան, կը ստանձնէ երկրին դեկու ու կը դառնայ պետութեան շարժիչը:

Առանց մոռնալու հայաբնակ խոտովայոյց որեւէ շրջան, Ջաւախքէն մինչեւ Իրաք, վաղը թերեւս այլ տեղ, մեր ուշադրութեան երկրորդ կիցակէտը Ղարաբաղի Հանրապետութիւնն է: Ղարաբաղեան հարցը այսօր Հայ Դատի օրակարգային գլխաւոր կէտն է. հոն է, որ կը բարձրանայ հայկական պահանջատիրութեան նորօրեայ ամրացը: Կըրպէյ-ճանական թէ թրքական սադրանքներուն, յանձնաժողովներուն, մարմիններուն, դիւանագիտական աշխատանքներուն, ցեղասպանութեան ենթարկուած ըլլալու մասին ձարտակցութիւններու դիմաց պէտք է կարողանանք միահամուռ կուրծք ցցել ու վիժեցնել ամէն սադրանքը:

Կրկինք, որ նման դերակատարութիւն մը ազգային - քաղաքական ասպարէզին մէջ կ'ենթադրէ ուժ եւ վարկ, որովհետեւ ճշմարտութիւնը լսելի է միայն երբ կը հնչէ հեղինակաւոր բերանէ: Ազգային հեղինակութեան տեղեղումը, հայութեան վարկին բարձրացումը կ'ենթադրեն Սփիւռքի կազմակերպչականութեան հզօրացումը եւ անոր քաղաքականացումը: Ասիկա կարելի կը դառնայ երբ կը համախմբուինք ու կը համախմբենք ուրիշները ազգային կառուցներուն շուրջ ու տեսանելի կը դարձնենք մեր մարտնչող միասնականութիւնը՝ մեր շահերու պաշտպանութեան դիրքերէն:

Ապրիլ 24ի առիթով կատարուած այս մտորումները պատահական չեն: Յեղասպանութիւնը մեր վերջին հարիւրամեակներու պատմութեան մեծագոյն աղէտն է: Հայաստանի ու Հայութեան վերածնունդին ի խնդիր վճարուած մեծ պարտավորակն է: Ապրիլ 24ի մեր ազգային ինքնութիւնը սահմանող բաղադրիչն է: Անկախութեան տօնին գուրահետ, հայ ազգին ներկան սահմանող ու ապագան ուղեշնչող տօն է Ապրիլ 24ը: Այս օրը, պարտիքը հաշուի նստիլ մեր հաւաքական խղճին դիմաց, մեր ըրածը վերլուծենք, արդար դատենք ու ընելիքը ծրագրենք:

Դարերու փորձութիւնները դիմադրուած ժողովուրդի մը գաւակներ ենք ու անցած ենք բազում աղէտներու լույզնէ: Մեզի վիճակուած է այսօր ըլլալու ժառանգորդները հայրենիքի մը, մշակոյթի մը, ազգային հարստութեան պատկառելի թողօնի մը, որոնք ո՞չ միայն պահպանելու, այլեւ զարգացնելու, լրացնելու ու հարստացնելու յանձնառուութիւն ունինք: Գործը ունիլիք կատարելիք սին խօսքով ու ամուլ վէճով չվատնենք մեզի սահմանուած ժամանակը: Տէր կանգնիք մեր յանձ

ԿԵՆՍԱՎԱՐՆԵՍԱԳԻՏԱԿԱՆ ...

Շարունակում՝ 7րդ էջէն

Մինչև ջարտահանումը օտարազգիները, գիտնականները յաջողած են գտնել ծինային անբնական երեւոյթներ, որոնք կրնան հիւանդութեանց դուրս բանալ:

1986ին գտնուած է Ժառանգական հիւանդութեան մը առաջին ծինը, իսկ ատկէ ետք, մասնագէտներ ժառանգական հիւանդութիւններու հարիւրաւոր ծինը յայտնաբերած են:

Միւս կողմէ, ծինը, որոնք սովորական հիւանդութիւններու եւ մարդկային վարուելակերպի կ'ազդեն, շատ աւելի նուազ թիւով են, մասամբ որովհետեւ բազմաթիւ ծիններ կը հակակշռեն զանոնք, ինչպէս նաեւ շրջապատի ազդակներ ազդեցութիւն ունին անոնց վրայ:

Այսուհանդերձ, յայտնաբերուած են ծիններ, որոնք կ'ազդեն տրամադրութեան, ուսելու կապուած սովորութիւններու, սրտի հիւանդութեան եւ շաքարախտի:

Տի. Էն. ԷՅ.Ը կապուած մէկ այլ «թեքնիք»ին մշակումը կարելի դարձուցած է մարդկային փորձիւններու արտադրութիւնը, ինչպէս՝ ինսուլինի արտադրութիւնը, հիւանդութիւններու դարմանումին համար:

Անցնող քանի մը տարիներուն, բժիշկներ կրցած են ուսումնասիրել կարգ մը քաղցկեղներու կապուած ծիններու գործունէութիւնը՝ աւելի ճշգրիտ արտաճանաչումներ կատարելու եւ ամէնէն ազդու դարմանումներ որոշելու համար:

Սակայն Տի. Էն. ԷՅ.Ը վրայ հիմնուած բազմաթիւ դարմանումներ, օրինակ՝ թերի ծինի մը անոր առողջ տարբերակով փոխարինումը, տակաւին երկար ժամանակի կը կարօտի՝ գործնականի վերածուելու համար:

ՏԻ. ԷՆ. ԷՅ. Ը ԱՐԿԱՐԱՎԱՏՈՒԹԵԱՆ ՄԱՐԶԻՆ ՄԷՋ

Տի. Էն. ԷՅ.Ը կապուած արհեստագիտութիւնը յեղաշրջած է ոճագործներ եւ ոճիւններ յայտնաբերելու գիտութիւնը:

1984ին, բրիտանացի հետազոտող Ալեք Ճեֆրիզ եւ անոր խմբակը մշակած են Տի. Էն. ԷՅ.Ը «մատնահետքերու» թեքնիքը, որ ներկայիս կ'օգտագործուի անհատներու ինքնութիւնը գտնելու համար:

Տի. Էն. ԷՅ.Ը դարձած է «բանալի վկայ մը» բազմաթիւ հարցերու մէջ, գտնելով յանցաւորը՝ անպարտ հաշակելով անմեղը:

Անիկա օգտագործուած է երեխայի մը հօր ինքնութիւնը յայտնաբերելու, արկածներու եւ ոճիւններու գոհերու ինքնութիւնը գտնելու համար:

Տի. Էն. ԷՅ.Ը կապուած արհեստագիտութիւնը գործածուած է նաեւ յայտնաբերելու 15 Ապրիլ 1912ին ընկղմած «Թայթէնիք» նաւուն ճամբորդներէն «անծանօթ երեխային» ինքնութիւնը:

Քննութիւններէ ետք ի յայտ եկած է, թէ Հայկ-Ֆաքսի մէջ (Քանադա) թաղուած 13 մասունքներէն ֆինլանդացի էջնօ Վիլիամի Փանուլայի աճիւններն են: Ան իր չորս

եղբայրներուն եւ մօրը հետ մահացած է երբ նաև ընկղմած է:

Սակայն, նման գիտական այլ յառաջդիմութիւններու, այս պարագային նաեւ կան վտանգներ: Քարինա Տենիս դիտել կու տայ, որ Տի. Էն. ԷՅ.Ը կարելի կը դարձնէ «զէպի մեր անցեալը, ներկան եւ ապագան պատահաններ բանալու: Սակայն անիկա կրնայ յայտնաբերել բաներ, զորս չենք ուզեր գիտնալ եւ կան մտավախութիւններ» ծինային խտրականութեան մասին, գործատէրերու, առողջ ընկերան կապուած ապահովագրութեան ընկերութիւններու կամ ընդհանրապէս ընկերութեան կողմէ:

«ԱԶԳԱԿ»Ի ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ
«ԱԶԳԱԿ»ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերու: - 258526, 260115 եւ 241274:

BALTAYAN ELECTRONIC

Մ. Ժամատեանի Գործարարական Փոխառուական ՍՊԿ-ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերու: - 258526, 260115 եւ 241274:

★ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ★

★ **ԽՈՅ** (21 Մարտին 20 Ապրիլ)
Ձեր գրասեղանին դարակէն դուրս պիտի հանք հին ծրագիր մը եւ այդ մասին նոր մշակում մը պիտի մտածէք ու գործադրէք: Օրը ունի նպաստաւոր պայմաններ:

★ **ՅՈՒԼ** (21 Ապրիլէն 21 Մայիս)
Մէկը պիտի ուզէ ձեզ հարուածել կեղծ կեցուածքով: Ու քանի որ դուք գիտէք անոր ծուռ տրամադրութիւնը, սկիզբէն առաջը պիտի առնէք հարցին: ★ **ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** (22 Մայիսէն 21 Յունիս)
Ձեր մէկ բարեկամին տարեդարձը շնորհաւորելու պարտականութիւնը պիտի ստանձնէք: Ու քանի որ գիտէք անոր խառնուածքը, յարմար նուէրը պիտի գտնէք զինք ուրախացնելու:

★ **ԽԵՅԳԵՏԻՆ** (22 Յունիսէն 23 Յուլիս)
Աշխատանքի ձեր գործունէութեան առնչութեամբ լաւ լուրեր պիտի չստանաք այսօր, որովհետեւ հաշիւները եւ արդիւնաբերութիւնը գոհացուցիչ չէ: Մի մտահոգուիք, անցողակի հարցեր են ասոնք: ★ **ԱՌԻԻԾ** (24 Յուլիսէն 23 Օգոստոս)
Կը վախճաք որ ձեր սիրոյ պատմութիւնը կարճատեւ ըլլայ, բայց ձեր կասկածը իրականութեան չի համապատասխանէ: Պիտի ունենաք սիրոյ հաստատ փաստեր, ուրեմն մի կասկածիք...

★ **ԿՈՅՍ** (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)
Ձեր կեանքին ձեր նոր փոփոխութիւնը պիտի ունենայ զրական կերպով: Ձեր հորիզոնը պիտի լուսաւորուի, եւ դուք նոր որոշումներ պիտի տաք եւ պիտի իրագործէք զանոնք յաջողութեամբ: ★ **ԿՇԻՌԻ** (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)
Որքան որ կրնաք հանգստացնել, ձեր հոգեքը մէկ կողմ նետելով: Ըսէք զուր ձեզի, թէ այսպիսի բաներ կը պատահին: Օրը ունի դրական երեւոյթներ: ★ **ԿԱՐԻՃ** (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)
Ձեր գաւակները կամ ձեր ընտանիքին անդամները ձեր ունենալ: Ինչ որ է չէք կատարել անոնց փափաքը: ★ **ԱՂԵՂՆԱՒՈՐ** (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)
Դարձաւ սերը կ'իշխէ ձեր վրայ, ու ոչինչ ունիք դժգոհելու: Եղբ հանդարտ ու սիրալիր: Օրուան պահանջներուն գոհացում տուէք: Ճշգրտաբար եղբ:

★ **ԱՅԾԵՂՋԻՒՐ** (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)
Մի ջղայնացաք անիմաստ հարցերու համար: Կատարեցէք ձեր որոշած աշխատանքները ըստ ձեր նաշակին, առանց լսելու ուրիշներուն տեսակետը: ★ **ԾՈՎԱՆՈՅՇ** (21 Յունուարէն 19 Փետրուար)
Պիտի կարեւոր ձեզի օգնող անհրաժեշտ նեցուկը գտնել ձեր ծրագիրները յաջողցնելու: Օրը յարմար է այցելելու թիւներ կատարելու եւ գուարանալու: ★ **ՁՈՒԿ** (20 Փետրուարէն 20 Մարտ)

Այսօր պիտի ստանաք նամակ մը, ուր գրուած է թէ սխալ մը գործած էք: Բայց նոյն ատեն պիտի ստանաք դրամատու մը, որ շատ պիտի ուրախացնէ ձեզ: Յոյսով ապրեցէք ու լաւ տես եղբ:

★ **ՄԱՐՏ** (21 Մարտին 20 Ապրիլ)
Ձեր գրասեղանին դարակէն դուրս պիտի հանք հին ծրագիր մը եւ այդ մասին նոր մշակում մը պիտի մտածէք ու գործադրէք: Օրը ունի նպաստաւոր պայմաններ:

★ **ՅՈՒԼ** (21 Ապրիլէն 21 Մայիս)
Մէկը պիտի ուզէ ձեզ հարուածել կեղծ կեցուածքով: Ու քանի որ դուք գիտէք անոր ծուռ տրամադրութիւնը, սկիզբէն առաջը պիտի առնէք հարցին: ★ **ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** (22 Մայիսէն 21 Յունիս)
Ձեր մէկ բարեկամին տարեդարձը շնորհաւորելու պարտականութիւնը պիտի ստանձնէք: Ու քանի որ գիտէք անոր խառնուածքը, յարմար նուէրը պիտի գտնէք զինք ուրախացնելու:

★ **ԽԵՅԳԵՏԻՆ** (22 Յունիսէն 23 Յուլիս)
Աշխատանքի ձեր գործունէութեան առնչութեամբ լաւ լուրեր պիտի չստանաք այսօր, որովհետեւ հաշիւները եւ արդիւնաբերութիւնը գոհացուցիչ չէ: Մի մտահոգուիք, անցողակի հարցեր են ասոնք: ★ **ԱՌԻԻԾ** (24 Յուլիսէն 23 Օգոստոս)
Կը վախճաք որ ձեր սիրոյ պատմութիւնը կարճատեւ ըլլայ, բայց ձեր կասկածը իրականութեան չի համապատասխանէ: Պիտի ունենաք սիրոյ հաստատ փաստեր, ուրեմն մի կասկածիք...

★ **ԿՈՅՍ** (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)
Ձեր կեանքին ձեր նոր փոփոխութիւնը պիտի ունենայ զրական կերպով: Ձեր հորիզոնը պիտի լուսաւորուի, եւ դուք նոր որոշումներ պիտի տաք եւ պիտի իրագործէք զանոնք յաջողութեամբ: ★ **ԿՇԻՌԻ** (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)
Որքան որ կրնաք հանգստացնել, ձեր հոգեքը մէկ կողմ նետելով: Ըսէք զուր ձեզի, թէ այսպիսի բաներ կը պատահին: Օրը ունի դրական երեւոյթներ: ★ **ԿԱՐԻՃ** (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)
Ձեր գաւակները կամ ձեր ընտանիքին անդամները ձեր ունենալ: Ինչ որ է չէք կատարել անոնց փափաքը: ★ **ԱՂԵՂՆԱՒՈՐ** (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)
Դարձաւ սերը կ'իշխէ ձեր վրայ, ու ոչինչ ունիք դժգոհելու: Եղբ հանդարտ ու սիրալիր: Օրուան պահանջներուն գոհացում տուէք: Ճշգրտաբար եղբ:


★ **ԱՅԾԵՂՋԻՒՐ** (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)
Մի ջղայնացաք անիմաստ հարցերու համար: Կատարեցէք ձեր որոշած աշխատանքները ըստ ձեր նաշակին, առանց լսելու ուրիշներուն տեսակետը: ★ **ԾՈՎԱՆՈՅՇ** (21 Յունուարէն 19 Փետրուար)
Պիտի կարեւոր ձեզի օգնող անհրաժեշտ նեցուկը գտնել ձեր ծրագիրները յաջողցնելու: Օրը յարմար է այցելելու թիւներ կատարելու եւ գուարանալու: ★ **ՁՈՒԿ** (20 Փետրուարէն 20 Մարտ)

Այսօր պիտի ստանաք նամակ մը, ուր գրուած է թէ սխալ մը գործած էք: Բայց նոյն ատեն պիտի ստանաք դրամատու մը, որ շատ պիտի ուրախացնէ ձեզ: Յոյսով ապրեցէք ու լաւ տես եղբ:

ՕՐԱՏԵՏՐ

ՓՈՒՍՏՈՆ / ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ / ԶԲՕՍԱՇՐՉՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱՐԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՆԱԽԱՉԵՌՆՈՒԹԻՒՆՆԵՐ



Ֆրանսական մշակութային կեդրոնը սովորութիւնը ունի հանրութեան անընդմէջօրէն մատուցելու գեղարուեստական ու մշակութային ձեռնարկներ: Այս ձեռնարկներուն մաս կը կազմէ նաեւ կիրարական արուեստի ցուցահանդէսներու նշարք մը, որ ի մի կը խմբէ լիբանանցի ու ֆրանսացի նորարար արուեստագէտներու գործերը, որոնք իրաւաստուել յղացումներ ըլլալու կողքին, ունին նաեւ գործածական ըլլալու առաւելութիւնը: Ստորեւ կը ներկայացնենք յառաջիկայ օրերուն տեղի ունենալիք այս ցուցահանդէսներուն նշարքը:

Ֆրանսացի ու միջին արեւելքի տասներկու ձեռագէտներու կիրարական արուեստի գործերը պիտի ցուցադրուին 29 Ապրիլէն մինչեւ 23 Մայիս, «Էսկուպա տէ լէթր»ի մէջ: Այս գործերը ցուցադրուած են «Պիէնալի ինթերնասիոնալ տի-կայն Սէնթ Էրիէն 2002»ի ընթացքին: Այս ցուցահանդէսին ընթացքին պիտի ներկայացուին նիւթի հետ առնչուող ծաւալներ:

30 Ապրիլի ամբողջ օրուան ընթացքին, առաւօտեան ժամը 10:00-էն մինչեւ կէսօրուան ժամը 1:00 «Լ'էրլ սիւփերիէօր տէլ օֆէր»ի մէջ տեղի պիտի ունենայ հանդիպում մը տիպային լիբանանցի ուսանողներուն եւ նախորդ օրը հանդէս եկած անուանի ձեռագէտներուն միջեւ: Հանդիպումին նպատակն է նախապատրաստուիլ 2004ի տեղի ունենալիք աշխատանքային հանդիպումներուն:

ԱՅՍՕՐ

- Նկարչական ցուցահանդէս՝ «Սըրվալլը», Հայկազեան համալսարանի մէջ, մինչեւ 5 Մայիս:
- Գորգերու ցուցահանդէս - վաճառք, Հայ Աւետարանական քոլեճի մէջ, մինչեւ 6 Մայիս:
- Թատրոն «Էլ Մահֆուզ», ժամը 20:30-ին, «Ալ Մատինա» թատերասրահին մէջ, մինչեւ 30 Ապրիլ:
- Նկարչական ցուցահանդէս՝ Հանիպալ Սրուժի գործերը, «Ժանիւ Ռուպէլ» ցուցասրահին մէջ, մինչեւ 2 Մայիս:
- Պարային ելոյթ՝ «Լէ քայէ տը լա տանս», ժամը 20:30-ին, «Մոննո» թատերասրահին մէջ, մինչեւ 29 Ապրիլ:

ՕԴԵՐԵՒՈՅԹ



ԵՐԵՎԱՆԻ, 29 ԱՊՐԻԼ 2003
ՊԵՅՐՈՒԹ
ՄԱՍԱՄԲ ԱՄՊՈՏ
ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆ
ՑԵՐԵԿ՝ 21°C
ԳԻՇԵՐ՝ 13°C
ԽՈՆԱՌՈՒԹԻՒՆ՝ 72%



ԱԶԳԱԿ 50 ՏՆՄԻ ԵՄԵՋ
29 Ապրիլ 1953

ՀԱՅ ՄԱՐԱԶԱԽՏԻ ՄԸ ՄԱՀԸ ԻՐԱՆԻ ՄԷՋ

Ամսոյա Ցին Թեհրանի մէջ մահացողներու կը իրանահայ ծերունակարդ մարաշխտ (սարտար) իսկանտար խան Սէթխանեան: Յուրաքանչեւ որ հանդիսութիւնը կատարուած է Ա. Աստուածածին եկեղեցիի մէջ, ուր խօսուած են նաեւ դամբանականգներ:

Կրթութիւնը ստացած է Թաւրիզի գաղթական վարժարանին մէջ: Բաժնի լուսուցչութեան շրջանին: 12 տարեկանին դրկուած է Թիֆլիս եւ փոխարքայի յանձնարարութեամբ արձանագրուած զինուորական վարժարան, շրջանաւարտ ըլլալէ վերջ անկէ, կը մեկնի Մոսկուա եւ հոն կը ստանայ զինուորական բարձրագոյն ուսում: 1890ին կը վերադառնայ իր ծննդավայրը՝ Թաւրիզ: Յետոյ կ'անցնի Թեհրան եւ կը մտնէ զինուորական ծառայութեան մէջ, սպայի աստիճանով: Կարճ ժամանակ վերջ կը ճանաչուի պարսկական բանակի հետեւագործ ընդհանուր հրամանատար: 1906ին յատուկ հրովարտական կը նշանակուի սպայակոյտի պետ եւ այդ պատասխանատու պաշտօնը կը վարէ մինչեւ 1917: 1914ին կը ստանայ մարաշխտի աստիճան, որ մինչ այդ ոչ մէկ զինուորականի տրուած էր:

ԱՅՍՕՐ ԱՊՐԻԼ 29ԻՆ

- 1859 - Երուսաղէմի ձեմարանի հիմնում:
- 1904 - Իշխանձորի կռիւ:
- 1967 - Հայկական Հարցը Սոցիալիստիկ հարաւ-ամերիկեան երկիրներու միջխորհրդարանական համագումարի օրակարգին վրայ:

ԽԱՉԲԱՌ ԹԻԻ 5425

Պատրաստեց՝ Տ.Մ. ԱՂԱԶԱՐԵԱՆ

1											
2											
3											
4											
5											
6											
7											
8											
9											
10											
11											

ՇՈՐՀՈՆԱԿԱՆ ՈՒՂԱՇԱՅԵՍ

1. Ակուսյի արմատին շուրջը պատող նիւթ - Տարի:
2. Անցաւոր, գնալուն:
3. Մարդեան քաղաք - Հօտ:
4. Երկիր, գետին - Տեւտայի:
5. Թմբեցուցիչ հիւթով բոյս - Համադասական շաղկապ:
6. Աշխարհամաս:
7. Ժխտական մասնիկ - Վոճմակ - Այբուբենէն:
8. Գտակ - Գրքոյկ:
9. Լեզոնական ռազմավար - Նուազարանի թիւ:
10. Ուշիմ - Թաղման արարողութիւն:
11. Կանացի օտար շաքարածիր - Քուն - Մարմար:

ԹԻԻ 5424

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԾՈՒՄԸ

1	Գ	Ռ	Օ	Ս	Ո	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
2	Տ	Ո	Ր	Մ	Ի	Ղ	Ի	Մ	Ս	Ս	Ս
3	Ե	Ի	Ք	Ք	Ո	Ց	Ի	Ս	Ս	Ս	Ս
4	Ղ	Ա	Ն	Ս	Ք	Ր	Ի	Ի	Ս	Ս	Ս
5	Ն	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
6	Ա	Ց	Ր	Ղ	Ա	Կ	Ի	Ս	Ս	Ս	Ս
7	Գ	Ա	Գ	Ր	Ա	Ս	Կ	Ս	Ս	Ս	Ս
8	Մ	Ո	Ր	Ն	Ա	Ա	Ր	Ր	Ր	Ր	Ր
9	Ա	Ց	Ր	Ղ	Ա	Ր	Ս	Ս	Ս	Ս	Ս
10	Օ	Ց	Ք	Ն	Ք	Ր	Ս	Ս	Ս	Ս	Ս
11	Ա	Ց	Ո	Ր	Ն	Ա	Ր	Ր	Ր	Ր	Ր

Մ Ա Ր Ջ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Տ



Հ. Մ. Ը. Մ. Ի ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՇՆՈՐՀԱՌՐԷ ՖՈՒԹԳՈՒԼԻ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԸ

Հ. Մ. Ը. Մ. Ի Շրջանային վարչությունը, հաղորդագրությունները մեր շնորհատրեց Լիբանանի ֆուտբոլի ֆեդերասիոնը՝ Լիբանանի Ողիմպիական խումբին Աթենքի մեջ տեղի ունենալիք պտումի մրցումներուն գծով Բ. հանգրուանի հասնիլը:

ՊԱՍԵՆՈՒՄ

Հ. Մ. Ը. Մ. ԱՆԹԻԼԻԱՍԻ ԿՐՏՍԵՐՆԵՐԸ ԼԱԻ ՄԵԿՆԱՐԿ ՄԸ ՈՒՆԵՑԱՆ

Լիբանանի պաշտպանի տարիքային ախոյեանություններուն մրցումներուն, որոնք սկսան անցեալ շաբաթվա երջին, Հ. Մ. Ը. Մ. Անթիլիասի տղաքը իրենց կատարած երկու մրցումներուն ալ յաղթանակներ արձանագրեցին:

Երեկ, 84-85ի ծնունդ դասակարգին մեջ, Հ. Մ. Ը. Մ. Անթիլիաս 20-0 (ի բացակայութեան) պարտութեան մատնեց Նահտա Ընէթ Շահուանը: Անցեալ Շաբաթ օր, 88-89-90ի ծնունդ դասակարգին մեջ, Հ. Մ. Ը. Մ. Անթիլիաս 75-40 արդիւնքով պարտութեան մատնեց Ռասիկ Հապիհ:

ՖՈՒԹԳՈՒԼ

Հ. Մ. Ը. Մ. ՊՈՒՐՃ ՀԱՍՈՒՏ ՊԱՐՏՈՒԵՑԱԻ

Լեռնալիբանանի նահանգէն ներս տեղի ունեցող Լիբանանի Գ. դասակարգի ախոյեանութեան (Ե. խմբակ) 7րդ հանգրուանին իր կատարած մրցումին, անցեալ կիրակի օր, Հ. Մ. Ը. Մ. Պուրճ Համուտի խումբը 3-1 արդիւնքով պարտութեան մատնեց Նուսր Ալէյին: Քֆարշիմայի դասին վրայ տեղի ունեցած այդ մրցումին, մրցակից կազմը Ա. կիսախաղին 1-0 արդիւնքով յաղթանակեց:

ՓԻՆԿ ՓՈՆԿ

ԱՂԶԿԱՆՑ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

Լիբանանի փինկ փոնկի աղջկանց խմբային ախոյեանություններուն մրցաշարքին, որ տեղի կ'ունենայ Մոն Լա Սալի մեջ, Լիբանանի ախոյեան Հ.Մ.Ը.Մ. Պիլոսի աղջկանց խումբը, անցեալ Շաբաթ օր կատարեց իր առաջին մրցումը եւ 3-0 արդիւնքով պարտութեան մատնեց Մար Եուսէֆ Ընէթ Շահուանը:

Հ.Մ.Ը.Մ. Պիլոսի աղջիկները այսօր երկու մրցում ունին կատարելիք, առաջինը՝ Ժամուրի դէմ, իսկ երկրորդը՝ Շապապ Չուքի դէմ:

Լիբանանի փինկ փոնկի գարնանային տարիքային մրցաշարքին, որ կը սկսի այսօր՝ Երեքշաբթի, Մոն Լա Սալի մեջ, իրենց առաջին մրցումները կը կատարեն Հ.Մ.Ը.Մ. Ի հետեւեալ մարզիկները:

- Դուրիս - Զարոյ Մուհըղլեան (88 - 89ի ծնունդ, Հ.Մ.Ը.Մ. Պիլոսի)
- Մայք Փոլատեան (88 - 89ի ծնունդ, Հ.Մ.Ը.Մ. Թրիփոլի)
- Աս Մուհըղլեան (92 - 93ի ծնունդ, Հ.Մ.Ը.Մ. Պէյրուս)
- Հրակ Պետոյեան (92 - 93ի ծնունդ, Հ.Մ.Ը.Մ. Թրիփոլի)
- Արմէն Պուշաքեան (92 - 93ի ծնունդ, Հ.Մ.Ը.Մ. Թրիփոլի)
- Վարանդ Պոյաճեան (92 - 93ի ծնունդ, Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս)
- Հրակ Մաուելեան (88 - 89ի ծնունդ, Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս)

ՖՐԱՍԱՅԻ ՖՈՒԹԳՈՒԼԻ ԲԱԺԱԿԻ ՄՐՑԱՆՈՒՄ

ՓԱՐԻՉ ՄԵՆ ԺԵՐՄԵՆ - ՕՔՍԷՌ ԱԻԱՐՏԱԿԱՆ

Ֆրանսայի ֆուտբոլի բաժակի մրցաշարքին կիսաարտականի մրցումներուն, որոնք տեղի ունեցան անցեալ շաբաթվա երջին, Փարիսի Մեն ժերմէնի օքսեր յաղթանակներ արձանագրելով ապահովեցին արտական մրցումին իրենց տունը: Անոնք յաղթանակ Մայիս 31ին «Սթաու տը Ֆրանս»ի դաշտին մեջ կը ճակատին իրարու դէմ:

Փարիսի Մեն ժերմէն իր յաղթանակը արձանագրեց «Փարք տը Փրէնս»ի մեջ, ուր 2-1 արդիւնքով պարտութեան մատնեց Պորտոն, շնորհիւ՝ Ռոնալդ Կրիստիանի նշանակած երկու կոլերուն (21րդ եւ 80րդ): Պորտո մրցումը արարեց տասը մարզիկով, երբ 55րդ վայրկեանին Մարքո Քանելլա կարմիր քարտ մը ստացաւ: Նշենք, թէ Փարիսի Մեն ժերմէն իր պատմութեան մեջ եօթներորդ անգամ ըլլալով կը հասնի արտականին:

Օքսեր արտականի իր տունը ապահովեց 2-0 արդիւնքով պարտութեան մատնելով Ռէննը: Յաղթական կազմին երկու կոլերը նշանակեց ձիպրիլ Սիւսէ (42րդ եւ 90րդ), իսկ Ռէննի կոլը՝ Օլիվիէ Սորէն (62րդ):

ԱՆԳԼԻՈՅ ՖՈՒԹԳՈՒԼԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՄԱՆՉԵՍԹԵՐ ԵՈՒՆԱՅԹԸ «ՓԱԽԱԲ» ԱՐՍԵՆԱԼԵՆ ԵՒ ՄԵԾ ԲԱՅՆ ՄԸ ԱՌԱԲ ԴԵՊԻ ՏԻՏՂՈՍ

Անգլիոյ ֆուտբոլի ախոյեանութեան 36րդ հանգրուանի մրցումներուն, պարագլուխի դիրքը գրաւող Մանչեսթըր Եունայթըդ 2-0 արդիւնքով յաղթական վերադառնալի ետք Թորթենհամի դաշտէն հինգ կէտի առաւելութիւն մը ունեցաւ 2րդ դիրքը գրաւող Արսենալի վրայ, որ 2-2 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրեց Պոլթընի հետ: Հիւրընկալ կազմին առաջին կոլը նշանակեց Եուրի ձորքայէֆ (74րդ):

36րդ հանգրուանի մրցումներուն մեծագոյն յաղթականը սակայն եղաւ Լիվըրպոլ, որ 6-0 արդիւնքով պարտութեան մատնեց Ուէսթ Պրոմուիչը: Մայքըլ Օուրն նշանակեց չորս կոլ:

Ստորեւ՝ 36րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.	ԳԵՏ
Թորթենհամ - Մանչեսթըր Եունայթըդ	0-2
Մանչեսթըր Սիթի - Ուէսթ Համ	0-1
Պիմսֆորտ - Միտլդըրօ	3-0
Պոլթըն - Արսենալ	2-2
Չարլթըն - Մաութհէմքըն	2-1
Չելսի - Ֆուլհէմ	1-1
Էվըրթըն - Ասթոն Վիլա	2-1
Լիօ - Պլեյքըրն	2-3
Սանտրրիչես - Նիքիթըր	0-1
Ուէսթ Պրոմուիչ - Լիվըրպոլ	0-6
ԳՍՍԵՆՈՒՄ	
1.- Մանչ. Եունայթըդ	77 (68-32)
2.- Արսենալ	72 (73-38)
3.- Նիքիթըր	65 (60-46)
4.- Չելսի	64 (66-36)
5.- Լիվըրպոլ	64 (59-37)
6.- Էվըրթըն	59 (47-45)
7.- Պլեյքըրն	56 (47-42)
8.- Թորթենհամ	50 (50-53)
9.- Չարլթըն	49 (44-51)
10.- Մաութհէմքըն	48 (41-40)
11.- Մանչ. Սիթի	48 (45-52)
12.- Պիմսֆորտ	47 (39-46)
13.- Միտլդըրօ	46 (42-41)
14.- Ասթոն Վիլա	42 (40-44)
15.- Ֆուլհէմ	42 (38-50)
16.- Լիօ	41 (52-54)
17.- Պոլթըն	40 (39-50)
18.- Ուէսթ Համ	38 (39-57)
19.- Ուէսթ Պրոմուիչ	24 (26-62)
20.- Սանտրրիչես	19 (21-60)

ԷՆ. ՊԻ. ԷՅ.

ՄԵԼԹԻՔՍ Կ ԱՐՇԱԻԷ

Էն. Պի. Էյ. փէյթօֆի մրցումներուն, Պոսթըն Սթիթսը, Օրլանտո Մէճիք եւ Փորթլէստ Թրէյլ Պէյքըրը, իրենց արձանագրած յաղթանակներուն շնորհիւ այժմ 3 - 1 արդիւնքով կը յաղթանակեն: Սթիթսը 102 - 92 արդիւնքով պարտութեան մատնեց Ինտիանա Փէյքըրը, Մէճիք Տիթսը Փիթսըրը (100 - 92), իսկ Պէյքըրը՝ Տայա Մալքըրիքը (98 - 79):

Նշենք, թէ այժմ փէյթօֆի Ա. հանգրուանի մրցումները կ'ընթանան հետեւեալ ձևով.

ՄԵԼԹԻՔՍ ԵՐՋԱՆ	ԳԵՏ
Միլուոքի Պաքս - Նի ձորքի Նէթ	2 - 2
Ֆիլադելֆիա Սիքսըրս - Նի Օրլանտո	2 - 1
Պոսթըն Սթիթս - Ինտիանա Փէյքըր	3 - 1
Օրլանտո Մէճիք - Տիթսըր Փիթսըն	3 - 1

ՄԵԼԹԻՔՍ ԵՐՋԱՆ	ԳԵՏ
Մաքքամենթո Քինկ - Եուրա ձէյ	2 - 1
Լոս Անձելըս Լէյքըրս - Մինեսոթա Վուլվս	2 - 2
Տ. Մալքըրիքս - Փորթլէստ Թրէյլ Պէյքըր	3 - 1
Ֆեօնիքս Սանկ - Ման Անթոնիո Սփրիք	2 - 2

ՄՊԱՆԻՅ ՖՈՒԹԳՈՒԼԻ ՄԵՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ ՌԵՍԻՍԻՆԱՆ ԳԱՐՁԵԱԼ ԱՌԱՆՁՆԱՑԱԻ ՊԱՐԱԳԼՈՒԽԻ ԴԻՐՔԻՆ ՎՐԱՅ

Սպանիոյ ֆուտբոլի ախոյեանություններուն 31րդ հանգրուանի մրցումներուն, պարագլուխի դիրքը գրաւող Ռէալ Մատրիտ թէւ յաղթանակ մը արձանագրեց 3 - 1 արդիւնքով պարտութեան մատնելով Սելիլլան, սակայն Մալորքա եւ Պարսելոնա անոր մեծ «բարիք» մը կատարեցին, երբ յաջորդաբար պարտութեան մատնեցին Ռէալի ետին գոտուղները՝ Տեփորթիո Քորուան (2րդ) եւ Ռէալ Սոսիէտատը (3րդ), որոնք այժմ չորսական կէտով ետ կը մնան անկէ:

Ստորեւ՝ 31րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Վալենսիա - Ալաւէս	3 - 0
Սելթա Վիլո - Ռէալ Վալադոլիտ	0 - 0
Մալորքա - Տեփորթիո Քորուան	2 - 2
Մալորքա - Տեփորթիո Քորուան	3 - 0
Ռեալ Սոսիէտա <Նուելլա - Վալադոլիտ	5 - 0
Ռաջո Վալենսիա - Էսփանիոլ	0 - 3
Ռաջո Վալենսիա - Ռէալ Մատրիտ	1 - 3
Պարսելոնա - Ռէալ Սոսիէտատ	2 - 1

Արդիւնքը Պիլաո - Ռէալ Պեթիս 3 - 1	ԳԵՏ
Արդիւնքը Մատրիտ - Օսասունա 0 - 1	
ԳՍՍԵՆՈՒՄ	
1.- Ռէալ Մատրիտ	64 (70 - 32)
2.- Տեփորթիո Քորուան	60 (52 - 36)
3.- Ռէալ Սոսիէտատ	60 (58 - 40)
4.- Վալենսիա	53 (46 - 24)
5.- Սելթա Վիլո	52 (36 - 24)
6.- Սելիլլա	42 (28 - 28)
7.- Ռէալ Պեթիս	42 (42 - 44)
8.- Մալալկա	42 (39 - 35)
9.- Արդիւնքը Պիլաո	41 (47 - 51)
10.- Արդիւնքը Մատրիտ	41 (43 - 41)
11.- Մալորքա	41 (37 - 46)
12.- Պարսելոնա	40 (49 - 42)
13.- Ռասիկ Սանթանտեր	37 (40 - 48)
14.- Էսփանիոլ	36 (38 - 42)
15.- Ռէալ Վալադոլիտ	36 (28 - 33)
16.- Վալադոլիտ	36 (31 - 42)
17.- Ռեալ Սոսիէտա <Նուելլա	33 (33 - 50)
18.- Օսասունա	33 (30 - 38)
19.- Ալաւէս	30 (31 - 52)
20.- Ռաջո Վալենսիա	27 (26 - 52)

ՊՈՒՆՏՍՈՒԿԱՆ ՊԱՅԵՐՆ ՄԻՒՆԻՒՄ 18ՐԴ ԱՆԳԱՄ ԸԼԼԱԼՈՎ ՀԱՆԴԻՍԱՑԱԻ ԱԽՈՅԵԱՆ


Գերմանիոյ ֆուտբոլի ախոյեանություններուն (ՊուՆՏՍՈՒԿԱՆ) 30րդ հանգրուանի մրցումներուն, պարագլուխի դիրքը գրաւող Պայերն Միւնխէն 2 - 0 արդիւնքով պարտութեան մատնեց Էտրաքտընը, 18րդ անգամ ըլլալով տիրացաւ ախոյեանություն տիրութեան: Հակառակ անոր որ տակաւին չորս հանգրուան կալ 2002 - 2003 եղանակը արարեցին, սակայն ըլլալ Շթութթընը եւ ըլլալ Պորտսմա Տորթմունտ երբեք յոյս չունին հասնելու Պայերնի, որ այժմ ոչ մէկ ձիգ պիտի ինայի յաղթանակ Մայիս 31ին Գերմանիոյ բաժակի

մրցաշարքին արարեցին արտականութեան մատնելու համար Քայ-Վերթալտըրըն եւ չորս 2000ին):

Ստորեւ՝ 30րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Արմինիա Պիլֆելտ - Քոպպուս	2 - 2
Քայլերթալտըրն - Վերտըր Պրեմըն	1 - 0
Համպուրկ - Նիքեմպերկ	4 - 0
Վոլֆսպուրկ - Պայերն Միւնխէն	0 - 2
Հերթա Պերլին - Հանովըր 96	2 - 0
Շթութթըն - Համպուս Ռոսթըր	1 - 1
Շալքէ - Պոլտա	1 - 2
Պորտսմա Մեօնը - Պայերն Լեյքըրն	2 - 2
Պորտսմա Մեօնը - Պորտսմա Տորթմունտ	0 - 0
ԳՍՍԵՆՈՒՄ	
1.- Պայերն Միւնխէն	66 (61 - 25)
2.- Շթութթըն	53 (48 - 35)
3.- Պորտսմա Տորթմունտ	52 (44 - 23)
4.- Հերթա Պերլին	51 (45 - 31)
5.- Համպուրկ	48 (39 - 34)

ՖԻՖԱԻ ՅԱՏՈՒԿ ՆԻՍՏ ԳԱԼ ԱՄԻՍ



Անցեալ շաբաթվա երջին, ՖԻՖԱն հաղորդեց, որ գալ ամիս յատուկ հանդիպում մը պիտի ունենայ, որուն ընթացքին գլխաւոր քննարկումը պիտի ըլլալ 2006ի Մոնտիպիլի խումբերուն թիւը 32ին 36ի բարձրացնելու հարցը:

ՖԻՖԱի նախագահ Սեփ Դլեթըր անցեալ ամիս 2006ի Մոնտիպիլի հիւրընկալող երկրին՝ Գերմանիոյ կազմակերպիչ յանձնախումբին նախագահ Ֆրանց Պեքընպատրի յայտնած էր այս գաղափարը: Գերմանացին ոչ մէկ արգելք տեսած էր աշխարհի ամենէն կարեւորագոյն եւ մեծագոյն այս մրցաշարքին խումբերուն թիւը անցնելու գծով:

Հարաւային Ամերիկայի ֆուտբոլի ֆեդերասիոնը իր կարգին գոտուակութիւն յայտնած էր այս ուղղութեամբ:

2010ի Մոնտիպիլի անդրադառնալով, ՖԻՖԱ ըսաւ, որ արիւրկեան ցամաքմասին մաս կազմող երկրները մինչեւ յառաջիկայ Մայիս 31 պայմանաւորում ունին իրենց թեկնածութիւնը դնելու:

Նշենք, թէ առաջին անգամ ըլլալով Ափրիկէի մէջ տեղի ունենալիք 2010ի Մոնտիպիլի հիւրընկալելու համար ցարդ իրենց թեկնածութիւնը դրած են՝ Եգիպտոս, Լիպիա, Մարոք, Նիկերիա, Հարաւային Ափրիկէ եւ Թունիս:

Եթէ թեկնածու ներկայացած այդ երկրները իրենց թեկնածութիւնը չքաշեն մինչեւ յառաջիկայ Սեպտեմբեր 30 (2003), իրենց թղթածրարները պէտք է ներկայացուցած ըլլան ՖԻՖԱին: ՖԻՖԱի պատասխանատուները թեկնածու ներկայացած այդ երկրները այցելելով 15 Ապրիլ 2004ին իրենց վեկուցումը պիտի փոխանցեն ՖԻՖԱին, որ այդ թուականէն ամիս մը ետք պիտի յայտարարէ, թէ ո՞ր երկիրը պիտի հիւրընկալէ 2010ի Մոնտիպիլը:

ԲԱԼՉԻՕ

ԵՆՈՒՎԵՆԹՈՒՍ ՈՒԹ ԿԷՏՈՎ ՀԵՌԱՑԱԻ ԻՐ ԱՆՄԻՉԱԿԱՆ ՄՐՑԱԿԻՑՆԵՐԷՆ

Իսպանիոյ ֆուտբոլի ախոյեանություններուն (Բալչիօ) 30րդ հանգրուանի մրցումներուն, դարձալուխի դիրքը գրաւող Եուվեթուս, 2-1 արդիւնքով դարձալուխ մատնեց Էտրաքտընը, մեծ քայլ մը առաւ դէպի ախոյեանութեան փախուցումը, նկատելի անցեալով որ անոր անմիջական երկու մրցակիցները՝ Էտրաքտընը եւ Ա. Մէ. Միլան արձանագրեցին ոչ համոզիչ արդիւնքներ: Առաջինը 1-1 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրեց Լաքո Ռոմայի հետ, մինչ երկրորդը՝ դարձալուխ Ա. Էս. Բոնապէն (2-1):

Ստորեւ՝ 30րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

- Պոլոնիա - Զիլեո 1-1
- Զոնո - Մոտեմա 0-0
- Էմփոլի - Ուտիկեզէ 1-1
- Ինթեր Միլան - Լաքո Ռոմա 1-1
- Եուվեթուս - Պրեզիա 2-1
- Փիաչենցա - Փերուճիա 5-1
- Ռեճինա - Փարմա 0-0
- Ա. Էս. Բոնապէն - Ա. Մէ. Միլան 2-1
- Աթալանթա - Թորինո 2-2

ԳՍՍԵՆՈՒՄ

ԳԵՏ	ԳԵՏ
1.- Եուվեթուս	67 (57-22)
2.- Ինթեր Միլան	59 (58-34)
3.- Ա. Մէ. Միլան	55 (48-24)
4.- Լաքո Ռոմա	53 (51-29)
5.- Փարմա	49 (48-31)
6.- Զիլեո	48 (41-32)
7.- Ուտիկեզէ	44 (31-33)
8.- Ա. Էս. Բոնապէն	42 (48-41)
9.- Փերուճիա	39 (36-42)
10.- Պոլոնիա	38 (36-39)

